Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Ֆիզկուլտուրա>> առարկայի (14 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված ժամաքանակի վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/,
2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /Ձև 4/
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում (հասցե՝ ք.Գյումրի, Գարեգին Ա 6/16) 2025 թվականի դեկտեմբերի 22-ից մինչև 2026 թվականի հունվարի 09-ը ներառյալ՝ ամեն օր ժամը 10:00 -15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի հունվարի 12-ին ժամը 14:00-ին, Շիրակի մարզի <<Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 091929810 հեռախոսահամարով: